ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ սույն թվականի մայիսի 19-ից 25-ը Հոգեշնորհ Տ. Գարեգին աբեղա Հարությունյանի հետ մասնակցեցինք "World Vision" միջազգային բարեգործական կազմակերպության կողմից Բուխարեստում "Christ to the Children" ծրագրի շրջանակներում "Training of Trainers" նպատակային վերնագրով գումարված խորհրդաժողովին, որը նվիրված էր մանուկների քրիստոնեական ուսուցման առարկայի և կրոնից ուսուցիչների պատրաստման ծրագրերին: Նիստերին հրավիրված էին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հետխորհրդային 10 երկրների հոգևորական ու աշխարհական շուրջ 27 մասնակիցներ, ինչպես նաև՝ մեկ ներկայացուցիչ Եգիպտոսից:

Բացի մեզանից Հայաստանը ներկայացնում էին նաև Հայր Անտոն վարդապետ Թոթոնջյանը՝ Կաթողիկե Եկեղեցուց, ով ներկայիս Հայաստանի "Caritas" կազմակերպության տնօրենն է, Կարեն Մանուկյանը՝ Ավետարանչական Եկեղեցուց, և Կարինե Հարությունյանը՝ Հայաստանի "World Vision"-ից:

Եռօրյա քննարկումների ընթացքում ամերիկացի բանախոսները փորձեցին մասնակիցներին ծանոթացնել երեխաների քրիստոնեական կրթության առարկայի (Curriculum) և դասավանդման արևմտյան մեթոդներին ու ձևերին՝ ի մասնավորի կարևորելով անչափահասների հավատքի և հոգեբանության տարիքային փուլերի զարգացման առանձնահատկությունները: Միաժամանակ կարևորվեցին ուսուցիչների դասավանդման որակական հատկանիշներն ու հմտությունները՝ Սուրբ Գրքի ծանոթության, մանկավարժական փորձի ու անհատական մոտեցման, նյութի դյուրընկալ մատուցման և արդյունավետ դասավարման տեսանկյունից:

Խորհրդաժողովի կազմակերպիչներն ասացին, որ իրենք ակնկալում են, թե մասնակիցները խորհրդաժողովի արդյունքում ձեռք բերված նյութերն ու փորձը կաշխատեն կիրառել իրենց երկրների կրթա-մշակութային կյանքում, այդ մեթոդները համադրելով ուսուցիչների քրիստոնեական կրթության ու պատրաստության առկա ծրագրերի հետ:

Խորհրդաժողովի օրերին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի հրավերով մայիսի 25-ին, կիրակի օրը, առաջնորդանիստ եկեղեցում մասնակցեցինք Պատարագի սրբազան արարողությանը, որից հետո հանդիպում ունեցանք տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ